Կարգապահական գործ թիվ ԿԳ-23007

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի (զեկուցող), Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Հունան Բաբայանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Հայկ Սահակյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կարինե Սիմիդյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 944), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Սպարտակ Կարապետյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է, որ 2021 թվականի սեպտեմբեր ամսին կամավոր սնանկության դիմում ներկայացնելու համար դիմել է Փաստաբանին, իրենց միջև 2021 թվականի սեպտեմբերի 25-30-նն ընկած ժամանակահատվածում կնքվել է պայմանագիր, իսկ Դիմողը դրա դիմաց նրան վճարել է 300.000 ՀՀ դրամ: Մինչդեռ, ըստ Դիմողի, փաստաբանն իրեն չի տրամադրել կնքված պայմանագրի օրինակն ու համապատասխան վճարման անդորրագիրը: Դիմողը նշել է, որ 2021 թվականի հոկտեմբերից մինչև 2023 թվականի հունվարի 8-ը փաստաբանը ոչինչ չի արել պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ, իսկ կամավոր սնանկության դիմումը դատարան չի մուտքագրել՝ պատճառաբանելով, որ գործի հետ կապված բարդություններ կան, դրանցով է զբաղված:

Դիմողը հայտնել է, որ փաստաբանն իրեն խաբել է և չի զբաղվել իր գործով, ինչի արդյունքում ինքը կրել է մեծ վնասներ, իսկ 09.01.2023 թվականին կապ է հաստատել

փաստաբանի հետ, պահանջել վերջինիս հետ կնքված պայմանագրի օրինակը և հայտնել, որ հրաժարվում է փաստաբանի ծառայություններից, ինչի արդյունքում փաստաբանը բղավել է և իրեն անվանել անհասկացող:

Դիմողը 30.01.2023 թվականին Պալատին հասցեագրված դիմումին կից ներկայացրել է փաստաբանի հետ վարած էլեկտրոնային հաղորդակցության ապացույցներ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 16.03.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 20.03.2023 թվականին Պալատին հասցեագրված գրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

Դիմողը հավելել է, որ պարբերաբար զանգահարում էր փաստաբանին տեղեկություններ ստանալու համար, սակայն վերջինս պատասխանում էր, որ գործի հետ կապված կան բարդություններ, իսկ հետագայում խուսափում էր հարցերին պատասխանելուց՝ անվանելով դա հարցաքննություն:

Դիմողի պնդմամբ, փաստաբանի կողմից իր պարտականությունների չկատարման պատճառով նա կրում է վնասներ, քանի որ բանկերում նրա պարտավորությունների վրա կուտակվում են տույժեր, որոնք չէին լինի, եթե փաստաբանը բարեխիղճ աշխատեր:

Դիմողը կից ներկայացրել է իր և փաստաբանի հաղորդագրությունների պատճենը և դրանց տեսաձայնագրությունները:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Սպարտակ Կարապետյանի դիմումի վերաբերյալ, սակայն փաստաբանի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 16.03.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանի կողմից լրացուցիչ տեղեկություն չի ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 10.02.2023թ. թիվ 39-Ա/ԿԳ-23007 որոշմամբ փաստաբան Կարինե Սիմիդյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.4 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

16.02.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 17.04.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ Փաստաբանը պետք է գործողություններ ձեռնարկեր Դիմողի կամավոր սնանկության գործընթացի ուղղությամբ, սակայն Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնելու պահից չի ձեռնարկել անհրաժեշտ գործողությունները և բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չի տվել Դիմողին, Փաստաբանը՝ Դիմողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ստանձնելու պահից մինչև կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումը Պալատ ներկայացնելն ընկած ժամանակահատվածում, չի իրականացրել անհրաժեշտ գործողությունները հանձնարարության արագ ու արդյունավետ կատարման ուղղությամբ, Դիմողը Փաստաբանից պահանջել է վերադարձնել պայմանագրով վճարված գումարը, սակայն Փաստաբանը չի վերադարձրել պայմանագրով ստացած հոնորարի մի մասը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 25.05.2023թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, դրան կից ներկայացրած նամակագրությամբ: Միաժամանակ, նշվածը չի հերքվել Փաստաբանի կողմից:*

2. Փաստաբանը պետք է գործողություններ ձեռնարկեր Դիմողի կամավոր սնանկության գործընթացի ուղղությամբ: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, դրան կից ներկայացրած նամակագրությամբ, ինչպես նաև «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում Սպարտակ Հրաչյայի Կարապետյանի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ:*

3. Դիմողը վճարել է համապատասխան գումարը Փաստաբանին հանձնարարության կատարման կապակցությամբ: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, դրան կից ներկայացրած նամակագրությամբ, որի շրջանակներում մատնանշվում է գումարը վճարելու հանգամանքը, և այն չի հերքվում Փաստաբանի կողմից:*

4. Դիմողը հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, ինչպես նաև Պալատին ներկայացված դիմումով և այդ դիմումի կապակցությամբ Փաստաբանից բացատրություն պահանջելու Պալատի նախագահի 24.01.2023թ. թիվ 01/01/84-23 գրությանը Փաստաբանի առարկությունների և/կամ հերքումների բացակայությամբ:*

5. Դիմողը Փաստաբանից պահանջել է վերադարձնել պայմանագրով վճարված գումարը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ, ինչպես նաև Պալատին ներկայացված դիմումով: Միաժամանակ, նշվածը չի հերքվել Փաստաբանի կողմից:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Կարինե Սիմիդյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009 թվականից, և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում ունի 2 կարգապահական տույժ (տույժերը ուժի մեջ մտած չեն):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.4 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Այդ կապակցությամբ, փաստաբանի համար Կանոնագրքով սահմանվում են մի շարք պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականությունը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Ավելին, ստանձնած հանձնարարության որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար և դրա վերաբերյալ պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել իր վստահորդին՝ պատասխանելով նրան հետաքրքրող հարցերին: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Հանձնաժողովը, հաշվի առնելով սույն կարգապահական վարույթի շրջանակներում Փաստաբանին վերագրվող վարքագիծը, անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերով նախատեսված պահանջների պահպանման մասով ապացուցման պարտականությունը կրում է հենց Փաստաբանը՝ առնվազն վստահորդի կողմից իրեն տրված հանձնարարության շրջանակներում համապատասխան գործողությունները ձեռնարկելու մասով:

Կարգապահական գործի շրջանակներում Դիմողի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը 2021 թվականի սեպտեմբեր ամսվա վերջին ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը և իրեն տրված հանձնարարության շրջանակներում պետք է գործողություններ ձեռնարկեր Դիմողի կամավոր սնանկության գործընթացի ուղղությամբ, սակայն ընդհուպ մինչև 11.01.2023թ.՝ Պալատ դիմում ներկայացնելը, Փաստաբանը չի ներկայացրել որևիցե ապացույց իրեն տրված հանձնարարության փաստացի կատարման վերաբերյալ:

Նշվածի մասին վկայում է Դիմողի կողմից ներկայացված նամակագրությունը, որտեղ2021 թվականի հոկտեմբերի 10-ով թվագրված հաղորդագրության համաձայն՝ *Փաստաբանը Դիմողի քրոջը հայտնում է այն մասին, որ Դիմողը չի պատասխանում իր զանգին, իսկ առկա պայմանավորվածության համաձայն Դիմողը պետք է վճարեր գումարի մնացած մասը:*

2021 թվականի հոկտեմբերի 11-ով թվագրված հաղորդագրության համաձայն՝ *Փաստաբանը հայտնել է, որ Դիմողի գործով առկա է խնդիր, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերել Դիմողի քրոջ հետ՝ 50.000 ՀՀ դրամ գումարը ստանալու վերաբերյալ:*

2021_ թվականի հուլիսի 12-ով թվագրված հաղորդագրության համաձայն՝ *Դիմողի քույրը հետաքրքրվելով գործի ընթացքի մասին, Փաստաբանից ստանում է պատասխան առ այն, որ Դիմողի գործը օգոստոսի վերջ կավարտվի: Նշվածից հետո, Դիմողի քույրն իր հերթին հարցնում է, արդյոք սկսվել է համապատասխան գործը, քանի որ նախորդ օրվա դրությամբ վարույթ առկա չէր, ինչին ի պատասխան Փաստաբանը հայտնել է, որ «Հարցաքննության եմ Գայ՞ ես ասեցի վարույթ կա կամ չկա ուշադիր կկարդաս ինչ եմ գրել»: Հետագայում, Դիմողի քույրը հարցրել է «Կար ջան սնանկ ճանաչելու համար չե՞ս դիմել դատարան, ու եթե չես դիմել ինչի՞ մինչև հիմա չես դիմել, սեպտեմբերից հարցումա արվու՞մ», ինչին ի պատասխան Փաստաբանը հայտնել է՝ «Գայ ջան գրել եմ, ևս մեկ անգամ գրում եմ օգոստոսին կավարտվի, կներես ավարտվի գործը հանգիստ կհարցաքննես» հավելելով, որ կան խնդիրներ Դիմողի գործի հետ կապված:*

Մեջբերված նամակագրության՝ որպես ապացույցի վերաբերյալ Հանձնաժողովը կարևորում է այն փաստը, որ Փաստաբանն այդ նամակագրությանն իր մասնակցության փաստը չի վիճարկել ու չի ժխտել, ավելին՝ Փաստաբանը նաև չի ներկայացրել որևէ փաստարկ այն մասին, որ տվյալ նամակագրության բացահայտումը կամ որպես ապացույցի հետազոտումն ու գնահատումը խախտում են կամ կարող են խախտել իր իրավունքները: Հետևաբար, քննարկվող նամակագրության վերաբերյալ Փաստաբանի դրսևորած վարքագիծը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ այն կարող է օգտագործվել որպես ապացույց և ծառայել որոշակի փաստի հաստատմանը կամ հերքմանը:

Նշվածը հաշվի առնելով և նկատի ունենալով, որ Փաստաբանը փաստացի չի ներկայացրել Դիմողի կողմից մատնանշված հանգամանքները հերքող որևիցե ապացույց կամ բացատրություն, որն առերևույթ կվկայեր նրա կողմից որոշակի աշխատանք կատարելու փաստի մասին և, միևնույն ժամանակ նկատի ունենալով նաև, որ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում փաստացի չի գտնվել Դիմողին սնանկ ճանաչելու կապակցությամբ Փաստաբանի միջոցով նախաձեռնված դատական գործի վերաբերյալ տեղեկատվություն, Հանձնաժողովը գալիս է հետևության, որ Փաստաբանը խախտել է Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 կետերի պահանջները:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ցանկացած դեպքում հանձնարարության կատարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը փոխկապակցված է դրանց արդյունավետ և ժամանակային առումով գործադրման հետ, ուստի Փաստաբանի կողմից որևիցե գործողություն իրականացված չլինելու պայմաններում հնարավոր չէ խոսել դրանց ժամանակին և արդյունավետ կատարման մասին:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերն իրենց ամբողջության մեջ, ինչպես նաև հաշվի առնելով Փաստաբանի առարկությունների բացակայությունը՝ գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները:

7.2. Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերությունների որոշակիությունից և կանխատեսելիությունից ելնելով՝ որպես իրավական երաշխիքներ Կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում է պայմանագիրը լուծվելու դեպքում որոշակի գործողությունների կատարմանը հետամուտ լինելու պարտականությունը՝ մասնավորապես, պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, վստահորդին կամ պատվիրատուին, ինչպես նաև հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը վստահորդին վերադարձնելու մասով:

Կարգապահական գործի շրջանակներում Դիմողի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով, ինչպես նաև Փաստաբանի առարկությունների բացակայությունը հաշվի առնելով՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Փաստաբանն իրեն տրված հանձնարարության կատարման նպատակով՝ որպես ծառայությունների մատուցման վճար, ստացել է որոշակի գումար, սակայն, ինչպես արդեն արձանագրվել է, չի ներկայացրել որևէ ապացույց կամ դիրքորոշում իր կողմից կատարված գործողությունների վերաբերալ:

Նման պայմաններում հաշվի առնելով, որ գործի քննությամբ հաստատվել է Փաստաբանի ծառայություններից Դիմողի հրաժարվելու փաստը, մասնավորապես՝ Դիմողը 11.01.2023թ. Պալատին հասցեագրված իր բողոքում (դիմումում), ի թիվս այլնի՝ նշել է, որ հրաժարվում է Փաստաբանի ծառայություններից, իսկ նշված բողոքը՝ Պալատի նախագահի 24.01.2023թ. 01/01/84-23 գրությանը կից 24.01.2023թ. ուղարկվել է (այդ թվում էլեկտրոնային փոստին) Փաստաբանին՝ դրա կապակցությամբ բացատրություն ներկայացնելու նպատակով, իսկ Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը փաստացի իրազեկվել է Դիմողի՝ իր ծառայություններից հրաժարվելու կամարտահայտնության մասին, հետևաբար, Փաստաբանն իր հերթին պետք է հետամուտ լիներ այն գործողությունների կատարմանը, որոնք Կանոնագրքին համապատասխան ենթակա էին կատարման պայմանագիրը լուծվելուց հետո՝ մասնավորապես, վերադարձնել ստացված հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:

Այսինքն, Փաստաբանը նման պայմաններում պարտավոր էր Կանոնագրքին համապատասխան ձեռնարկել միջոցներ հոնորարի համապատասխան մասը վերադարձնելու ուղղությամբ, մինչդեռ նշված հանգամանքի հաշվառմամբ, Փաստաբանը Հանձնաժողովին չի ներկայացրել որևիցե ապացույց կամ դիրքորոշում, որը կվկայեր գումարը վերադարձնելու փաստի կամ առնվազն Դիմողին իր այդպիսի պատրաստակամությունը հայտնելու մասին:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցները իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են նաև Կանոնագրքի 3.8.4 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները, քանի որ Փաստաբանը իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար ստացել է որոշակի գումար, որի դիմաց ըստ գործի նյութերի չի կատարել որևէ աշխատանք, սակայն այդ պայմաններում Դիմողին չի վերադարձրել որևէ չափի գումար:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև ուժի մեջ չմտած 2 կարգապահական տույժերի առկայությունը, ինչից ելնելով նրա նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «խիստ նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարինե Ալբերտի Սիմիդյանի (արտոնագիր՝ թիվ 944) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.4 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23007-2-Ա
25 մայիսի 2023թ.
ք.Երևան